



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» *թուվաբաթ* 2021թ.

N 45-ԱԺ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ
ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ,
ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասով, 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 32-րդ հոդվածի 7-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 7-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 16-րդ և 34-րդ հոդվածի 3-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորող հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 8-ի N 11 որոշումը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 9 իրավաբանական անձանց շինարարության իրականացման լիցենզիա և թվով 11 ներդիր, 2 իրավաբանական անձանց շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիա և թվով 3 ներդիր, 3 իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման լիցենզիա և թվով 7 ներդիր (համաձայն հավելված 1-ի):

2. Տրամադրել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 2 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 2 ներդիր, 2 իրավաբանական անձանց քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման թվով 3 ներդիր, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի մոնիթինգային ծախսերի մատչելիության թվով 5 ներդիր (համաձայն հավելված 2-ի):

3. Փոփոխել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 1 իրավաբանական անձի քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման թվով 1 ներդիր, 1 իրավաբանական անձի քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության թվով 1 ներդիր (համաձայն հավելված 3-ի):

4. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված 2 իրավաբանական անձանց շինարարության իրականացման թվով 2 լիցենզիայի և 3 ներդիրի, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման լիցենզիայի և 4 ներդիրի գործողությունը (համաձայն հավելված 4-ի):

5. Վերաձևակերպել Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինության բնագավառի համապատասխան գործունեության տեսակներով զբաղվելու համար՝ 1 իրավաբանական անձի քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիան և թվով 1 ներդիրը (համաձայն հավելված 5-ի):

6. Մերժել 18 իրավաբանական անձանց շինարարության իրականացման, 3 իրավաբանական անձի շինարարության որակի տեխնիկական հսկողության, 1 իրավաբանական անձի քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման համար ներկայացված լիցենզիայի և ներդիրի տրամադրման հայտերը (համաձայն հավելված 6-ի):

7. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

- «Պետական տուրքի մասին» օրենքի համաձայն լիցենզիան հանձնել լիցենզավորված անձանց՝ համապատասխան տարեկան պետական տուրքի վճարման դեպքում:

- Համաձայն «Լիցենզավորման մասին» օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի, սույն հրամանի պատճենը երեք օրվա ընթացքում պաշտոնական հրապարակման համար ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

6/16/2021

X 

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ